

16.02.16թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում եմ «ՇԵՆ ՀՈԼԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը**

2016թ-ի փետրվարի 18-ին ժամը 12:00 տեղի է ունենալու «Շեն Հոլինգ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում ամփոփվելու են Ընկերության 2015թ-ին թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքները: Նշեմ որ մինչ այժմ չի տեղաբաշխվել ոչ մի հատ պարտատոմս՝ ելնելով ներկա պահին տնտեսության ճգնաժամային իրավիճակից:

Միաժամանակ հայտնում եմ, որ 2016թ-ի փետրվարի 08-ին լուծվել է «Շեն Հոլինգ» ՓԲԸ-ի և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև 01.09.2014թ-ին կնքված կարգավորող շուկայում «Շեն Հոլինգ» ՓԲԸ 2013 թվականին թողարկված պարտատոմսերի շուկայի ստեղծման ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը:

19.02.16թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում եմ «ՇԵՆ ՀՈԼ ԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը**

2016թ-ի փետրվարի 18-ին ժամը 12:00 տեղի ունեցավ «ՇԵՆ Հոլդինգ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում ամփոփվեցին Ընկերության 2015թ-ին թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքները: Արձանագրվեց, որ մինչև տեղաբաշխման ավարտը չտեղաբաշխվեց ոչ մի հատ պարտատոմս, որի հիմնական պատճառն է ներկա պահին տնտեսության ճգնաժամային իրավիճակը: Կապված վերջինիս հետ, ինչպես նաև շինանյութերի վաճառքի ոչ սեզոնի և արտաքին ֆինանսավորման չստացվելու (այդ թվում պարտատոմսերի տեղաբաշխումը) հետ, Ընկերությունը հունվար - փետրվարին որոշակի ուշացումով կամ մասնակի է կարողանում մարել եղած վարկային պարտավորությունները:

20.05.16թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի
50-րդ կետի՝ բացահայտում եմ «ՇԵՆ ՀՈԼԲԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող
հետևյալ էական տեղեկությունը**

2016թ-ի մայիսի 18-ին տեղի ունեցավ տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվեցին որոշ հարցեր և որոշում ընդունվեց 2016թ-ի մայիսի 23-ին, ժամը 12:00-ին Երևան, Շիրակի 2/2 հասցեում հրավիրել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով, որի նախապատրաստման ընթացքում տրամադրվող փաստաթղթերին բաժնետերերը կարող են ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում:

Տնօրենների խորհրդի այլ էական որոշումները ներկայացվում են ստորև.

1 Ընկերության 2015 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացման համար աուդիտորական երեք թեկնածու ընկերություններից որոշվեց ընտրել «Ֆոր Էյ Քոնսալթինգ» ՓԲԸ-ն և այն ներկայացնել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը:

2 2015 թվականի վերջերին Հայաստանի Հանրապետությունում առաջացած ծանր տնտեսական վիճակը, ինչպես նաև կարճաժամկետ պատերազմական վիճակը բացասական կերպով են ազդել Ընկերության արտադրված ապրանքների սպառման և ստացվելիք եկամուտների վրա և տվյալ իրավիճակից դուրս գալու համար Ընկերությունը ձեռնարկում է ամեն հնարավոր միջոցներ վարկերի և տոկոսագումարների սպասարկումն անխափան դարձնելու համար: Մեր կողմից կատարված վերլուծություններից և կանխատեսումներից ելնելով ակնհայտ էր, որ առանց արտաքին ֆինանսավորման 2016թ-ին ընկերությունը դժվարություններ կունենա ներգրավված փոխառու միջոցները, վարկերը և տոկոսները մարելու, և անավարտ ծրագրերի իրականացման հարցում անխափան գործելու համար:

Այսպիսով, ստեղծված դրամական միջոցների կանխատեսվելիք պակասը Ընկերությունը փորձեց լրացնել պարտատոմսերի նոր տրանշի 5,000,000 ԱՄՆ դոլար և 250,000,000 ՀՀ դրամ ընդհանուր ծավալի թողարկմամբ: Բարտատոմսերի վաճառքի վերաբերյալ 2015թ-ի նոյեմբերին Ընկերությունը պայմանավորվածություններ է ձեռքբերել մի քանի բանկերի հետ՝ այդ թվում նաև **«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ղեկավարության հետ:** Վերջինիս լիազոր ներկայացուցիչների հետ բազմիցս քննարկվել և համաձայնեցվել էր, որ պարտատոմսերի էական մասը (2,0 մլն ԱՄՆ դոլար) պետք է գներ **«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն**, իսկ մյուս մասը պետք է ձեռք բերվեին տարբեր

Ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից, որոնց մասով նույնպես ձեռք էին բերվել գնման համաձայնություններ: Սակայն, ՀՀ ԿԲ-ում ազդագրի գրանցումից և այնուհետև դրա հրապարակումից հետո անհասկանալի պատճառներով, վերջին պահին **«ԿՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն** հրաժարվեց այն գնել, որի հետևանքով այլ բանկեր (մասնավորապես Արդշինբանկը) և ֆինանսավարկային այլ հաստատությունները ևս հրաժարվեցին պարտատոմսերը գնելուց:

Նման պայմաններում Ընկերության բնականոն գործունեությունը խաթարվեց և հիմնական վաճառվող արտադրատեսակներն ապրիլի կեսերից ժամանակավոր դադարեցվեցին, Էականորեն նվազեցին՝ գիպսի իրացումները, շինարարության ծավալները, ակտիվ կրի վաճառքի ծավալները: Իսկ նման պայմաններում ընկերությունը հնարավորություն չունի սպասարկել իր կողմից ստանձնած վարկային պարտավորությունները:

Մեր Ընկերությունը 2008 թվականից ակտիվորեն ներգրավված է եղել Հայաստանի ֆինանսական շուկայում, եղել է առաջին ոչ ֆինանսական հաստատությունը, որի պարտատոմսերը ցուցակվել են բորսայում, և մինչ օրս բարեխղճորեն կատարել է ստանձնած պարտավորությունները: Սակայն, ելնելով ստեղծված իրավիճակից Ընկերությունը ներկա պահին ֆինանսական միջոցներ չունի անվանական պարտատոմսերի արժեկտրոնները սպասարկելու համար: Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ **«ԿՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն** հանդիսանում է պարտատոմսերի հիմնական սեփականատերը, Ընկերությունը փորձում է բանակցությունների միջոցով լուծել այս հարցը և հնարավորություն ստանալ տարածամկետ վճարել առկա պարտավորությունները և բարելավել ընկերության ֆինանսական վիճակը: Ներկա պահին բանակցություններ են վարվում պարտավորությունների հետաձգման կամ վերաֆինանսավորման համար նաև Ընկերության այլ վարկատու ԿՁԵԲ-ի, Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի և Համահայկական Բանկ ԲԲԸ-ի հետ:

26.05.16թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում եմ «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական
տեղեկությունը**

«ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ն պատրաստել է 2015թ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ նրանում ասոցիացված կազմակերպության (Շեն Ջորջիա, Վրաստան) ֆինանսական հաշվետվությունների ազդեցությանը: Շեն Ջորջիայի ղեկավարությունը խոստացել է, որ ֆինանսական հաշվետվությունները մեզ կներկայացնեն մինչև ս.թ. հունիսի 3-ը:

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությունը պատրաստ լինելուն պես (առավելագույնը մինչև 20.06.16թ.) դրանք անմիջապես կհրապարակվեն սահմանված կարգով: